ԹԵՄԱ 2 ԱՆՏԻԿ ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹՅՈՒՆՆԵՐ. ՀԻՆ ՀՈՒՆԱՍՏԱՆ

§ 14. ԱՐԽԱՅԻԿ ԴԱՐԱՇՐՋԱՆԻ ՀՈՒՆԱՍՏԱՆԸ

1 Թե՛ հողագործը, թե՛ անասնապահը կարիք ունեին աշխատանքի ավելի հարմար գործիքների: Առանձնանում էր մարդկանց մի խավ՝ արհեստավորները, որոնք մասնագիտացան աշխատանքային գործիքներ, ամանեղեն, հագուստ պատրաստելու գործում: Մարդկանց մեկ այլ խավ՝ առևտրականները, զբաղվում էին արհեստավորների արտադրած ապրանքները հեռու շրջաններ տանելով և մթերքի հետ փոխանակելով: Արհեստները և առևտուրը դարձան տնտեսության առանձին ճյուղ: Մարդիկ սկսեցին բարիքներ արտադրել ոչ միայն իրենց կարիքների, այլև շուկայում վաճառելու համար:

α	β	γ	δ	ε	ζ	η	θ
ալֆա	*բետա*	*գամմա*	*դելտա*	*էփսիլոն*	*զետա*	*էտա*	*թետա*
ι	κ	λ	μ	ν	ξ	ο	π
յոտա	*կապպա*	*լամբդա*	*մյու*	*նյու*	*քսի*	*օմիկրոն*	*պի*
ρ	σ	τ	υ	φ	χ	ψ	ω
ռո	*սիգմա*	*տաու*	*ուփսիլոն*	*ֆի*	*խի*	*փսի*	*օմեգա*

2 Հին հույները, օրինակ վերցնելով փյունիկեցիների տառերը, ստեղծեցին 24 տառից բաղկացած իրենց այբուբենը: Փոխեցին նաև գրության ուղղությունը և սկսեցին գրել ձախից աջ:

Հունական այբուբենի հիման վրա հետագայում ստեղծվել են սլավոնական լեզուներով խոսող շատ ժողովուրդների այբուբենները՝ ռուսական, ուկրաինական, բուլղարական, բելոռուսական և այլն: